ՀՈՐՍ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Շմավոն Ամրգուլյան

Հեռախոս՝ +374. 77.601404

Բնակչություն՝ 252

Վայոց ձոր մարզի Հորս գյուղը վերաբնակեցվել է 1918 թվականին Նախիջևանի Մեծոպ գյուղից ներգաղթված ընտանիքներով։
Գյուղն ավելի հին է քան ենթադրվում է, որի վկայությունն է գյուղի կենտրոնում կառուցված զարդաքանդակներով, սրբատաշ պատերով, 13 – րդ դարի կիսավեր «Չեսարի Դարպաս» կառույցը և հարակից՝ վարդագույն քարերով կերտած եկեղեցիական համալիրը։ Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1650 մ բարձրության վրա։ Գյուղից վերև Գնդասար լեռն է՝ 2960 մ բարձրությամբ։ Գնդասար և հարակից լեռների աղբյուրները ջրով ապահովում են գյուղը։ Գյուղն ունի մշակույթի տուն , հիմնական դպրոց, բուժկետ։
Գյուղի բնակիչները զբաղվում են գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ։
 Գյուղը սահմանակից է Շատին, Սալլի և Թառաթումբ համայնքներին, հեռավորությունը մարզկենտրոնից 20 կմ է։ Կլիման՝ ձմռանը ցուրտ է, ամռանը՝ զով: